Համահայկական հայագիտական 8-րդ օլիմպիադայի

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

(գրավոր փուլի համար)

Կինո, թատրոն

1. Ո՞րն է հայկական մուլտիպլիկացիոն առաջին կինոնկարը:
2. Ինչպե՞ս է կոչվում Հայաստանում անցկացվող կինոնկարների միջազգային փառատոնը:
3. Ինչպե՞ս է կոչվում հայկական առաջին հնչյունային կինոնկարը:
4. Ու՞մ անունով է կոչվում «Հայֆիլմ»-ը:
5. Ո՞վ է «Նռան գույնը» ֆիլմի կինոբեմադրիչը և ու՞մ է նվիրված այն:
6. Ո՞ր բնագավառի ներկայացուցիչներ են Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանը, Ավետ Ավետիսյանը:

Կրոն

7. Ո՞ր լեռան վրա է գտնվում Կոմմագենեի հայոց թագավորության գլխավոր սրբավայրը:
8. Ո՞րտեղ է պահվում Անահիտ աստվածուհու բրոնզաձույլ արձանի գլուխը:
9. Ո՞վ էր հայոց դիցարանում գրի ու գրականության հովանավոր աստվածը:
10. Ո՞ր աստվածներն են գլխավորել Հայոց դիցարանը: Ի՞նչ դեր և գործառույթներ են նրանք կատարել:

Գրականություն, գիտություն

11. Ո՞վ է «Վարք Մաշտոցի» երկի հեղինակը:
12. Ի՞նչ երկով է հայտնի Եզնիկ Կողբացին:
13. Ո՞վ է ստեղծել հայոց առաջին դատաստանագիրքը:
14. Ո՞ր թվականին է հիմնադրվել Երևանի համալսարանը:
15. Ե՞րբ է ստեղծվել ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան:
16. Գիտության ո՞ր բնագավառի ներկայացուցիչ էր Վիկտոր Համբարձումյանը:
17. Ո՞վ էր ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի առաջին նախագահը:
18. Ո՞ր գիտնական-փիլիսոփան է հիմնել Գլաձորի համալսարանը:
19. Ու՞մ անունն է կրում Երևանի պետական բժշկական համալսարանը:
20. Հայ գիտնական, որը հիմնադրել է ստորջրյա հնագիտությունը:
21. Հայերեն առաջին գիրքը ե՞րբ և որտե՞ղ է տպագրվել:
22. Հայաստանում ե՞րբ և որտե՞ղ է հիմնվել առաջին տպարանը:
23. Որտե՞ղ է գտնվում Մխիթարյանների միաբանությունը և ո՞վ է եղել նրա հիմնադիրը:
24. Ո՞վ «Մատյան ողբերգության» պոեմի հեղինակը:
25. Գրական ո՞ր ժանրի հեղինակը դարձավ Ներսես Շնորհալին:
26. Ո՞վ է Մուսա լեռան ինքնապաշտպանության մասին պատմող նշանավոր վեպի հեղինակը:
27. Ո՞վ է մեծարվել «Ամենայն հայոց բանաստեղծ» տիտղոսով:

28. Ո՞ր երկրում էր ապրել և ստեղծագործել Վիլյամ Սարոյանը:

Արվեստ

29. Ո՞վ է նկարազարդել Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» անմահ պոեմը, և պատկերել հանճարեղ հեղինակին:
30. Հայոց մանրանկարչության ամենամեծադիր նմուշը:
31. Մատենադարանում տեղակայված «Սասունցի Դավիթ» պաննոյի հեղինակը:
32. Ո՞վ է «Անուշ» օպերայի հեղինակը և ո՞ր պոեմի հիման վրա է այն ստեղծվել:
33. Ո՞ր հայ նկարիչներն են հայկական զինանշանի հեղինակները:
34. Ո՞վ է մշակել «Կռունկ» երգը:
35. Խաչքարերի ո՞ր տեսակն են անվանում «Ամենափրկիչ»:
36. Էջմիածնի Մայր տաճարի որմնանկարների հեղինակները:
37. Ո՞վ է «Սալոմե» շքեղաշուք կտավի հեղինակը:
38. Ո՞վ է հանրահայտ «Սպարտակ» բալետի հեղինակը:
39. Ո՞ր տաճարն է գտնվում Վանա լճի Կտուց կղզում:
40. Ո՞ր հայ նկարչին է պատկանում Եղիշե Չարենցի ամենահայտնի դիմանկարը:
41. Ո՞ր դարում է ստեղծվել Պազիրիկ աշխարհահռչակ գորգը:
42. Ո՞ւմ մեկենասությամբ են կառուցվել Հաղպատն ու Սանահինը:
43. Ո՞վ էր Կիլիկյան Հայաստանի ամենահայտնի մանրանկարիչը:
44. Էջմիածնի Մայր տաճարի առաջին գմբեթավոր եկեղեցին ո՞վ և ե՞րբ է կառուցել:
45. Հայ ո՞ր ճարտարապետն է վերականգնել Կոնստանդնապոլսի Ս.Սոֆիա տաճարի գմբեթը, որը 1000 տարի անց կանգուն է մինչև օրս:
46. Անիի ո՞ր տաճարում է գտնվում Գագիկ Բագրատունի թագավորի արձանը՝ տաճարի մանրակերտը ձեռքին:
47. Ո՞վ է միջնադարյան Հայաստանի այն նշանավոր ստեղծագործողը, որը միաժամանակ և՛ ճարտարապետ էր, և՛ նկարիչ, և՛ քանդակագործ:
48. Ո՞ր վանքում է գտնվում «Մագիստրոսի ճեմարան» լսարանը:
49. Որտե՞ղ է գտնվում նշանավոր կրոնական և գիտակրթական կենտրոն Կեչառիսի վանքը:
50. Ո՞րն է խաչքարային արվեստի նշանավոր բացօթյա թանգարան-գերեզմանոցը՝ 2005 թվականին բարբարոսաբար ոչնչացված ադրբեջանցիների կողմից:
51. Ալեքսանդր Թամանյանի ո՞ր ստեղծագործությունն է 1937թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում մեծ ոսկե մեդալ «Գրանտ Պրի» ստացել:
52. Ո՞վ է Երևանի Մատենադարանի, ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ Նախագահի նստավայրի շենքերի հեղինակը:
53. «Սանահինի վանքի գավիթը» հանրահայտ ստեղծագործության հեղինակը:
54. Երբ է բացվել Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի զոհերի հուշարձանը:
55. Ո՞վ է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և Բյուրականի աստղադիտարանի շենքերի հեղինակը:
56. Ո՞վքեր են Երևանի «Մայր Հայաստան» հուշարձանի հեղինակները:
57. Ու՞մ նախագծով է կառուցվել Սարդարապատի հուշահամալիրը:
58. Ո՞րն է աշխարհահռչակ նկարիչ Արշիլ Գորկիի ծննդավայրը:
59. Ո՞վ է «Վարդան Մամիկոնյան» հուշարձանի հեղինակը:

60. Ո՞ր թվականին է հիմնադրվել Հայաստանի Ազգային Պատկերասրահը:
61. 20-րդ դարի հայ նկարիչ Ջիոտտոյի իրական անունը:
62. Հայ մեծ նկարիչ, ով թարգմանել է Շեքսպիրի անմահ ստեղծագործությունները:
63. Բագրատունիների խորհրդանիշը (բազմիցս հանդիպում ենք հայ արվեստում):
64. Ինչպե՞ս են անվանում հայկական մանրանկարչության մեջ հաճախ հանդիպող, մարդկային դեմքով թռչուններին:
65. Ո՞վ է նկարել «Նոյը իջնում է Արարատից » ստեղծագործությունը:
66. Հայ ո՞ր թագավորին է պատկերել Թորոս Ռոսլինը:
67. Իտալական Վերածննդի մեծագույն վարպետ, որը Որդան Կարմիր և Հայկական Կավ է օգտագործել իր ստեղծագործություններում:
68. Հայկական տպագիր Աստվածաշնչի համար (1666-1668-թ) ո՞ր մեծանուն գերմանացի նկարիչն է կատարել նկարազարդումներ:
69. Ֆրանսահայ քանդակագործ, «Սալոմե» քանդակի հեղինակը:
70. Ո՞վ է ՀԽՍՀ գերբի հեղինակ գեղանկարիչը:
71. Հայ արևելագետ, որը 1934-1951թթ. եղել է Էրմիտաժի տնօրենը:
72. Ե՞րբ է ստեղծվել Հայաստանի պատմության թանգարանը:
73. Հայ ո՞ր նկարչին են պատկանում «Ալմաստ» օպերայի բեմանկարները:

Երաժշտության պատմություն

74. Ի՞նչ է հոռովելը: Ովքե՞ր և ի՞նչ նպատակով են երգել այն:
75. Ի՞նչ ժանրի երգ է «Կռունկը»: Նշել նույն ժանրի մեկ այլ երգ:
76. Ի՞նչ է աշուղական երաժշտությունը: Ի՞նչ գործիք են նվագել աշուղները: Նշել մի քանի աշուղների անուններ:
77. Գրիգոր Նարեկացին զարգացման կատարելության է հասցրել հայ միջնադարյան երգի մի կարևոր տեսակ, որը կոչվում է…
78. Ի՞նչ է Պատարագը: Ի՞նչ երաժշտական ժանրեր կան Պատարագի մեջ:
79. Ո՞ր ոլորտներում է գործել Կոմիտաս Վարդապետը:
80. Ո՞վ է «Անուշ» օպերայի հեղինակը: Ո՞ր գրական ստեղծագործության վրա է օպերան հիմնվում: Նշել մեկ այլ կոմպոզիտոր, որը նույնպես նպատակ է ունեցել ստեղծելու «Անուշ» օպերա: